

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ



РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
МАРЗПЕТАРАН
АРМАВИРА

0901 ք. ԱՐՄԱՎԻՐ
ԱԲՈՎՅԱՆ-71
Հեռ.՝ 0237/2-37-16
Ֆաքս 010/28-06-46

0901. Г. АРМАВИР
УЛ. АБОВЯН - 71
Тел. 0237/ 2 – 37 – 16
Факс. 010/ 28-06-46

<< ----- >>----- 2017թ. թիվ _____
Ձեր << ----- >>----- թ. թիվ -----

**<<ՇԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ>>
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
<<ՇԵՏՔ>> ԹԵՐԹԻ ԼՐԱԳՈՐԴ
ԳՐԻՇԱ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ**

Ի պատասխան Ձեր 2017 թվականի հունվարի 26-ի գրության՝ հայտնվում է, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի համապատասխան գրությամբ առաջարկվել է Մեծամորի համայնքի ղեկավարին ձեռնարկել համապատասխան միջոցներ կատարված խախտումները վերացնելու ուղղությամբ:

Միաժամանակ հայտնվում է, որ մեր կողմից բազմիցս անգամ համապատասխան շրջաբերական գրություններով առաջարկվել է մարզի համայնքների ղեկավարներին խստագույնս պահպանել <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի երկրորդ մասի 6-րդ կետի պահանջը, այն է՝ ավագանու անդամը պարտավոր է չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) շահերին:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կար՝ Փ. Կարապետյան
Յու. Մանվելյան



0901 ք. ԱՐՄԱՎԻՐ
ԱԲՈՎՅԱՆ-71
Հեռ.՝ 0237/2-37-16
Ֆաքս 010/28-06-46

0901. Г. АРМАВИР
УЛ. АБОВЯН - 71
Тел. 0237/ 2 – 37 – 16
Факс. 010/ 28-06-46

<< ----- >>----- 2017թ. թիվ _____
Ձեր << ----- >>----- թ. թիվ _____

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գրիգորյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին է դիմել <<Հետաքննող լրագրողներ>> հասարակական կազմակերպության <<Հետք>> թերթի լրագրող Գ. Բալասանյանը Ձեր համայնքի ավագանու 2016 թվականի օգոստոսի 9-ին մի շարք որոշումների առնչությամբ, որոնք վերերբերել են ավագանու անդամներից մի քանիսի և նրանց մերձավոր բարեկամների շահերին: Նրանց կողմից մասնակցությունը ավագանու այդ որոշումների քվեարկությանը պարտականությունների խախտում է համարվում, քանի որ ինչպես մինչև 2017 թվականի հունվարի 1-ը գործող, այնպես էլ նոր <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջով ավագանու անդամը պարտավոր է չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների շահերին:

Միաժամանակ հայտնվում է, որ մեր կողմից բազմիցս անգամ համապատասխան շրջաբերական գրություններով առաջարկվել է Ձեզ խստագույնս պահպանել <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի երկրորդ մասի 6-րդ կետի (նախկինում 20-րդ հոդվածի երկրորդ մասի 4-րդ կետ) պահանջը, այն է՝ ավագանու անդամը պարտավոր է չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) շահերին:

Առաջարկվում է ձեռնարկել համապատասխան միջոցներ կատարված խախտումները վերացնելու ուղղությամբ:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կար՝ Փ. Կարապետյան
Յու. Մանվելյան